ԳՆԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

Ձկնաբուծական տնտեսության ջրահեռացման համակարգի ձևափոխման և դրենաժային ջրանցքի պատի ուժեղացման համար

(RFP # 27/07/17)

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «ԳԱՏՕ»[1] ծրագիրը հրավիրում է մասնագիտացված տեղական կազմակերպություններին գնառաջարկներ ներկայացնելու Արարատի մարզի Հայանիստ գյուղի հարևանությամբ գտնվող ձկնաբուծարանի ջրահեռացման համակարգի ձևափոխման և ձկնաբուծարանի հարևանությամբ գտնվող դրենաժային ջրանցքի պատի ամրացման համար:

Պահանջվող աշխատանքների մասնագրերը և ծավալները, ինչպես նաև առաջարկվող գործարքի պայմանները ներկայացված են ստորև:

Ա. Աշխատանքների նկարագրությունը

Պահանջվում է ամրացնել «Սամվել Լաբլաջյան» ձկնաբուծարանի հարևանությամբ գտնվող դրենաժային ջրանցքի գրունտային պատը՝ բացառելով դրա հետագա փլուզումը ԱՄՆ ՄԶԳ «ԳԱՏՕ» ծրագրի մասնակցությամբ կառուցված համայնքային պոմպակայանի ուղղությամբ: Պոմպակայանի գտնվելու վայրը և պատի քանդվող հատվածը պատկերված են սույն հրավերի հավելվածում: Նույն հավելվածում ներկայացված են նաև տեղանքի լուսանկարները:

Ջրանցքի պատն ամրացնելուց առաջ անհրաժեշտ է ձևափոխել ձկնաբուծարանի ջրահեռացման համակարգը, որպեսզի կառուցվող պատվարը չփակի ջրահեռացման խողովակների ելքը:

Աշխատանքների իրականացումից հետո կապալառուն պետք է օրենքով սահմանված կարգով տարածքից հեռացնի ամբողջ շինարարական աղբը և վերականգնի տեղանքի սկզբնական տեսքը:

Բ. Մրցույթի իրականացման կարգը

Շահագրգիռ կազմակերպությունները պետք է մինչև ս.թ. օգոստոսի 2-ը իրենց հաշվին այցելեն ձկնաբուծարանի տարածք և տեղում գնահատեն պահանջվող աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը: Այցելությունները կազմակերպելու համար մասնակիցները պետք է զանգահարեն ծրագրի գրասենյակ՝ 010-514-315 հեռախոսահամարով:

Օգոստոսի 2-ին ժամը 15:00 ԳԱՏՕ ծրագրի գրասենյակում, սույն հրավերի «Դ» բաժնում նշված հասցեով, կազմակերպվելու է «Մրցույթի մասնակիցների հետ նախնական հանդիպում» (այսուհետ՝ Նախնական հանդիպում) մրցույթի մասնակիցների հարցերին պատասխանելու և պատվերի հետ կապված պարզաբանումներ տալու համար: Հանդիպման արդյունքներով կազմվելու է արձանագրություն հանդիպման ընթացքում հնչեցված բոլոր հարցուպատասխան-ներով և ուղարկվելու է հանդիպմանը ներկայացված շահագրգիռ կազմակերպություններին:

Շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը Նախնական հանդիպմանը պարտադիր է: Նախնական հանդիպմանը չմասնակցած կազմակերպությունների հայտերը չեն ընդունվելու:

---

[1] ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» ծրագիրն իրականացվում է «Մենդեզ Ինգլանդ ընդ Ասսոսիեյթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի կողմից: Ավելի մանրամասն տեղեկությունների համար այցելեք http://www.aspired.wadi-mea.com/ կայքը:

Գ. Գնառաջարկի ձևը, լրացուցիչ տեղեկություններ

Նախնական հանդիպմանը մասնակցած շահագրգիռ կազմակերպությունները (այսուհետ հայտատուները) պետք է ներկայացնեն իրենց գնային առաջարկությունները աղյուսակային ֆորմատով՝ առանձին-առանձին նշելով պատվերի կատարման համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների գները:

Հայտատուի կողմից ներկայացված ընդհանուր գնի և առանձին աշխատանքների գների հանրագումարի միջև տարբերություն հայտնաբերելու դեպքում ԳԱՏՕ-ն որպես հիմք ընդունելու է առանձին աշխատանքների գները:

Բոլոր գները պետք է ներկայացված լինեն առանց ԱԱՀ-ի:

Գնառաջարկում հայտատուն պետք է նշի իր հայտի վավերականության շրջանը (այսինքն՝ մինչև երբ է ուժի մեջ իր կողմից ներկայացված հայտը) և պատվերի կատարման համար պահանջվող ժամանակահատվածը:

Լրացուցիչ տեղեկություններ

Բացի վերը նշված ֆորմատով ներկայացված գնառաջարկից հայտատուն իր հայտում պետք է տրամադրի նաև հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1. համառոտ (մինչև 1 էջ) տեղեկանք կազմակերպության պատմության և փորձի մասին,
2. առնվազն երեք պատվիրատուների հեռախոսահամարները և հասցեները՝ հայտատուի արտադրանքի և ծառայությունների վերաբերյալ կարծիք հարցնելու համար:

Դ. Հայտի ներկայացման ձևը, վայրը և վերջնաժամկետը

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և լրացուցիչ տեղեկությունները (տես «Գ» բաժինը), պետք է մինչև **2017 թ-ի օգոստոսի 7-ը, մինչև ժամը 17:00** ներկայացվի ԳԱՏՕ ծրագրի գրասենյակ, որի հասցեն է.

Երևան 0009, Տերյան 105/1,
Ցիտադել բիզնես կենտրոն, 204 սենյակ

Գնառաջարկը պետք է ստորագրված լինի հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, կնքված լինի հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է նշված լինի հայտատու կազմակերպության անվանումը և «Սիփանիկի խորքային հորի լուծարում» բառերը:

Ե. Ընտրության սկզբունքը

Ընտրությունը կատարվելու է առաջարկված գնի հիման վրա: Հաշվի է առնվելու նաև ներկայացված տեղեկությունների հավաստիությունը, ինչպես նաև պատվերի կատարման համար առաջարկված ժամանակահատվածը:

Զ. Պարտավորությունների շրջանակների հստակեցում

Սույն հրավերի հրապարակումը ապրանքների և ծառայությունների մատակարարման պատվեր տալու որևէ պարտավորություն չի դնում ԳԱՏՕ ծրագրի վրա: Ավելին, ծրագիրը իրավունք է վերապահում մերժել բոլոր ներկայացված հայտերը:

Darbnik
Hayanist

Պոմպակայան
Ջրանցքի պատի
քանդվող հատված
Image © 2016 DigitalGlobe